հարկերից նրանք գիւղացիներից բռնութեամբ առնում են իւրաքանչիւր երեք-չորս շաբաթը մի անգամ 5 ձու, մի հաւ, մի ոչխար, կէս լիտր գարի, 10 լիտր յարդ, մի չարէք ալիւր, դանդ, թէյ և այլն։

—Վարժապետ ջան,—դարձաւ ինձ մի ծերունի Մարտիրոս անունով,—որ մէկն ասեմ, տանում են ամեն ինչ՝ մեր հասիլը (հունձը), եզները, օղչիրները (ոչխարները), հաւերը, մեզի չեն թողնում. չենք իմանում ինչ անենք, մնացել ենք տարակուսած—շւարած։ Չեն թողնում քաղը հասնի, գիշերանց գալիս տանում են, մարդ չէ կարողանում գիշերն էլ հանգիստ քնել. ցերեկն ասես չի լինում տան դուռը մի դաղէ բաց թողնել, ներս են մտնում և էջիզ են անում (նեղացնում), տէր չունենք, տիրական չունենք, ինչ ուզում՝ անում են, կամ բռնի զօնախ (հիւր) են գալիս, հաց ուզում, ուտում, խմում քէֆ անում, գնալիս զուլլուզ (փող, ծախս) են ուզում, թէ ասում ես չունենք, պարտք արա տուր պատասխանում են, երբ չես տալիս՝ ծեծում են։ Մեր ունեցած-չունեցածը տուեցինք իրանց, այժմ պալտքի տակ ենք. վկայ է էն Ս. Ամենափրկիչը՝ 10 խիզան (երեխայ) ունեմ, այժմ ուտելու հաց չունեն. ախ վարժապետ ջան, թրքերի ձեռքում ծախուած էսիր ենք . . .

Այսպէս է սիրելիս, խեղճ գիւղացիների դրութիւնը. նրանք անվերջ հարստահարւում, կեղեքւում են։ Գալիս են գիւղ աղայի մարդիկը և մնում այնտեղ օրերով, շաբաթներով. գիւղը նրանց պիտի կերակրի խորովածով, հաւ ու փըլաւով, սերով, մածունով և թէյով. նոյնպէս և կերակրի նրանց ձիերին, նրանց պիտի բաւարարեցնի, որպէսզի ծեծ չուտի։

Նրանք հեռանում են՝ և ահա գալիս են մի այլ աղայի մարդիկը. նոյնպէս նրանց էլ պիտի բաւարարութիւն տայ, մտնի նորանոր ծախսերի մէջ, ով կարող է հակառակել կամ մերժել, այն ժամանակ վայ է եկել գիւղացու գլխին։ Ահա այն իրողութիւնը սիրելիս, որի մէջ գտնւում է Ներքին Խոյգանի գիւղացիութիւնը, մի դրութիւն, որ շատ ճիշտ կերպով բնորոշեց ալևոր Մարտիրոսը՝ «թուրքերի ձեռքում